

Ձախ կողմն գտնուող բարեկամիս ըսի.

-Քիչ առաջ բոլորը կը խնդային՝ բացի կատուէն ու շունէն:

Ու ձախակողմեան բարեկամս պատմեց.

-Ընկերներես Արսէնը երբ մեռաւ, աղուոր յուղարկաւորութիւն մը կատարեցինք: Երբ դագաղը փոսը կ'իջեցնէին, սրտակեղեք էր տեսարանը: Բոլորը անխտիր կուլային: Կիները, անշուշտ, դիւրաւ կուլան: Բայց եղերական ու յուզիչ էր տեսնել այրերուն արտասուելը: Արցունքներով թրջած էին Արսէնին հողակոյտը: Հինգ տասը վայրկեան վերջը յուղարկաւորները դուրս կ'ելլէին գերեզմանատան դռնէն: Ու տեսնելիք բան էր այլափոխութիւնը: Ո՞ր էին լացողները...: Ամէն ոք ուրախ էր, շէն ու կատակող: Բազմութիւնը կարծես խնջոյքէ մը կը դառնար կամ ցայգատօսի մը կ'երթար: Ես մէկը միայն տեսայ, որ կը պահէր իր վիշտը ու սուգը: Աշոտին կատուն: Յուղարկաւորներուն ընկերացած էր մինչեւ գերեզման ու կը վերադառնար լալագին հեծկլտութիւններուն մէջ:

Դիմացս նստող բարեկամս մտիկ ըրած էր աջես ու ձախես պատմուածները: Անոր ըսի.

-Կրնա՞ս ըսել, թէ կենդանիները ի՞նչու չեն խնդար ուրախութեան պահերու մէջ:

Անիկա ինծի ըսաւ.

-Ես կենդանի չեմ: Կենդանիներուն հարցուր:

Վերարկուս հագայ, դուրս ելայ եւ ուղղուեցայ կենդանաբանական պարտեզ:

Առիւծի մը հարցուցի.

-Թագաւոր, ինչո՞ւ չես խնդար դուն:

-Տկեանս բանտարկութեան դատապարտուած մը տիւմար պետք է ըլլայ խնդալու համար:

-Եւ սակայն դուն քու ազատութեանդ օրերուն ալ չէիր խնդար, արքայից արքայ:

-Որքան ատեն որ մարդ արարածը երկրի վրայ երեւցած է, ազատութեան օ՞ր մնացած է:

-Ուղտի մը մօտեցայ եւ ըսի.